

Հավելված
«Հայաստանի Հանրապետության
փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի
կառավարման խորհրդի
30.11.2022թ. թիվ 13/7-Լ որոշման

Խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան



ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՉԱՓԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

ք. Երևան

2022թ.

1. «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամում (**այսուհետ՝ ՀՀ փաստաբանական ակադեմիա**) ուսուցումը կազմակերպվում է վճարովի հիմունքներով:

2. Ուսման վարձը կազմում է 950.000 (ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որը ունկնդիրը վճարում է ՀՀ փաստաբանական ակադեմիային անկանխիկ եղանակով տարածամկետ կարգով, հետևյալ ժամկետներում՝

- 1) 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամը վճարվում է մասնագիտական ուսուցման մասին պայմանագիրը (**այսուհետ՝ պայմանագիր**) կնքելու օրվա հաջորդ օրվանից հաշված 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում.
- 2) 350.000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը վճարվում է պայմանագիրը կնքելու օրվա հաջորդ օրվանից հաշված 60 (վաթսուն) օրացուցային օրվա ընթացքում.
- 3) 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամը վճարվում է պայմանագիրը կնքելու օրվա հաջորդ օրվանից հաշված 140 (հարյուր քառասուն) օրացուցային օրվա ընթացքում:

3. ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտորի որոշմամբ ունկնդրին կարող է թույլատրվել ուսման վարձը վճարել սույն կարգի 2-րդ կետում նշված ժամանակացույցից տարբերվող ժամանակացույցով՝

- 1) մինչև վեց ամսով՝ ելնելով ունկնդրի սոցիալական կամ նյութական վիճակից.
- 2) վեց ամիսը գերազանցող ժամանակահատվածով (բայց ոչ ավել, քան տասնմեկ ամիսը կամ ուսուցման ավարտը)՝ գրավոր քննության 150 (մեկ հարյուր հիսուն) միավոր և բանավոր քննության 98-100 (իննսունուրեց հարյուր) միավոր գնահատական գրանցելու դեպքում:

4. Ակադեմիայում ընդհանուր դիմորդների համար ուսուցման անվճար 3 (երեք) տեղ է սահմանվում, որից մեկը՝ քրեաիրավական ուղղվածության ունկնդիրների համար, մյուս երկուսը՝ քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության ունկնդիրների համար:

5. Խորհրդի կողմից սահմանած անվճար տեղերի շրջանակում անվճար հիմունքներով սովորելու իրավունքից կարող է օգտվել՝

- 1) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ ունկնդիրը.
- 2) 25 տարին չլրացած երկկողմանի ծնողազուրկ ունկնդիրը.
- 3) զոհված զինծառայողի (ազատամարտիկի) զավակը.
- 4) պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած զինծառայող ունկնդիրը:

6. Այն դեպքում, երբ Խորհրդի սահմանած տեղերի շրջանակում անվճար հիմունքներով սովորելու վերջին տեղին հավակնում են մեկից ավելի ունկնդիրներ, ապա նրանց ընտրությունը կատարվում է ստորև նշված չափանիշներին համապատասխան (ըստ հերթականության)

- 1) ընդունելության քննության (բանավոր և գրավոր քննությունների արդյունքները միասին) ավելի բարձր միավոր գրանցած ունկնդիրը.

- 2) կրթական ավելի բարձր աստիճան ունեցող ունկնդիրը.
- 3) սոցիալապես ավելի անապահով վիճակում գտնվող ունկնդիրը
7. ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտորի որոշմամբ ուսման վարձի զեղչից (ընդհանուր վճարից նվազեցվում է սույն կետում նշված տոկոսի չափով) կարող են օգտվել հետևյալ ունկնդիրները՝
 - 1) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի անդամ հանդիսացող փաստաբանի զավակը, ծնողը կամ ամուսինը՝ 10 (տասը) տոկոսի չափով.
 - 2) նույն հոսքի ժամանակահատվածում ՀՀ փաստաբանական ակադեմիայում սովորող ընտանիքի առնվազն երկու անդամները՝ (պապ, տատ, հայր, մայր, եղբայր, քույր, ամուսին), ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար 10 (տասը) տոկոսի չափով.
 - 3) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանությանը կամ Արցախյան պատերազմին մասնակցած և վիրավորում ստացած ունկնդիրը՝ մինչև 50 (հիսուն) տոկոսի չափով.
 - 4) Արցախյան երկրորդ (քառասունչորսօրյա) պատերազմին մասնակցած ունկնդիրը՝ մինչև 25 (քսանհինգ) տոկոսի չափով.
 - 5) Արցախյան երկրորդ (քառասունչորսօրյա) պատերազմի արդյունքում զիջված (կորցրած) տարածքներում բնակելի տուն կամ բնակարան կորցրած ընտանիքի անդամ հանդիսացող ունկնդիրը (եթե ունկնդիրը բնակվել է այդ տանը կամ բնակարանում)՝ մինչև 30 (երեսուն) տոկոսի չափով.
 - 6) Արցախյան երկրորդ (քառասունչորսօրյա) պատերազմի ընթացքում ընտանիքի անդամ (հայր, մայր, ամուսին, եղբայր, քույր, զավակ) կորցրած ունկնդիրը՝ 40 (քառասուն) տոկոսի չափով.
 - 7) գիտակրթական կամ ուսումնամեթոդական մրցույթներում հաղթող ճանաչված ունկնդիրը՝ ՀՀ փաստաբանական ակադեմիայի կողմից տրամադրված հավաստագրի հիման վրա՝ մինչև 25 (քսանհինգ) տոկոսի չափով.
 - 8) ՀՀ փաստաբանների պալատի կամ ՀՀ փաստաբանական ակադեմիայի աշխատակից հանդիսացող ունկնդիրը՝ սույն կետում նշված առավելագույն զեղչի չափից ոչ ավել չափով:
8. Խորհուրդն իրավասու է սահմանել ուսման վարձի զեղչի, արտոնությունների կիրառման այլ դեպքեր:
9. Ուսման վարձի արտոնություն կիրառելու կամ զեղչից օգտվելու համար ունկնդիրը (հավակնորդը) պետք է ընդունելության քննության արդյունքների ամփոփումից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում դիմում ներկայացնի ռեկտորին՝ կցելով արտոնության կամ զեղչի կիրառման հիմքը հաստատող ապացույցը: ՀՀ փաստաբանական ակադեմիայի աշխատակազմը կարող է լրացուցիչ պարզաբանումներ կամ փաստաթղթեր պահանջել ունկնդրից (հավակնորդից): Ժամկետանց դիմումը ռեկտորը կարող է քննարկել, միայն բացառիկ դեպքերում, եթե առկա է ժամկետը բաց թողնելու հարգելի պատճառ:
10. Դիմումի հիման վրա, ռեկտորը ողջամիտ ժամկետում ընդունում է որոշում՝

- 1) արտոնություն կիրառելու մասին, և/կամ
- 2) զեղչ տրամադրելու մասին, կամ
- 3) դիմումը մերժելու մասին:

11. Այն դեպքում, երբ ունկնդիրը կարող է սույն կարգի 7-րդ կետում նշված երկու կամ ավելի հիմքերով օգտվել ուսման վարձի զեղչերից, ապա ունկնդրին տրվում է միայն մեկ հիմքի համար նախատեսված առավել բարձր չափի զեղչը՝ առավելագույնի սահմանում:

12. Եթե ունկնդրի դիմումի հիման վրա կիրառվել է ուսման վարձի զեղչ, ապա վճարումը կատարվում է սույն կարգի 2-րդ կետում նշված ժամանակացույցով՝ ռեկտորի որոշման մեջ նշված համամասնությամբ:

13. Պայմանագիր կնքելուց առաջ ունկնդրի (հավակնորդի) ներկայացրած դիմումի վերաբերյալ մինչև պայմանագիր կնքելը ռեկտորի կողմից որոշում ընդունված չլինելու դեպքում, ունկնդիրը պետք է կնքի պայմանագիրը ընդհանուր կարգով: Ռեկտորի որոշմամբ դիմումը լրիվ կամ մասնակի բավարարվելու դեպքում, պայմանագրում կատարվում է համապատասխան փոփոխություն: